ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 30.03.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/38

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ) քննելով Գրիգոր Այվազյան Ա/Ձ-ի 12.03.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **Գրիգոր Այվազյան Ա/Ձ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

Գրիգոր Այվազյան Ա/Ձ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) 12.03.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Բողոքի առարկան, փաստացի հիմքերը և ապացույցները.

ՀՀ դատական դեպարտամենտ ՊԿՀ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից գրասենյակային հաշվողական սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ԴԴ-ԳՀԾՁԲ-18/01 ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերի թիվ 4 հավելվածով՝ գնային առաջարկով սահմանվել է, որ 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ չափաբաժինները ներկայացված են մի քանի ծառայությունների համախմբով, ինչն էլ ենթադրում է, որ մասնակցի կողմից ներկայացվող յուրաքանչյուր չափաբաժնի գնային առաջարկը պետք է ներառի տվյալ չափաբաժնով ներկայացված ծառայությունների համար առաջարկվող մատուցման ընդհանուր գների հանրագումարը:

Կից ներկայացվող գնացուցակի օրինակելի ձևի համաձայն՝ գնացուցակում պետք է նշվի ծառայությունների մատուցման միավոր գինը, որը բազմապատկվում է Ընթացակարգի տեխնիկական բնութագրով նշված ծառայությունների մատուցման քանակներին, և պետք է կազմի ծառայությունների մատուցման ընդհանուր գինը, ինչը պետք է նշվի գնային առաջարկի մեջ:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով 13-րդ չափաբաժնի մասով հայտ են ներկայացրել Գրիգոր Այվազյան Ա/Ձ-ն (այսուհետ նաև՝ Բողոքաբեր) և Արթուր Օհանյան Մասյիսի Ա/Ձ-ն:

Արթուր Օհանյան Մասյիսի Ա/Ձ-ն՝ ուսումնասիրելով ԴԴ-ԳՀԾՁԲ-18/01 ծածկագրով ընթացակարգի հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, թիվ 4 հավելվածով՝ գնային առաջարկով առաջարկել է պայմանագիրը կատարել 144,000 ՀՀ դրամ ընդհանուր գնով:

Գնային առաջարկին կից՝ Արթուր Օհանյան Մասյիսի Ա/Ձ-ն նաև ներկայացրել է Ընթացակարգի հրավերով նախատեսված գնացուցակի օրինակելի ձևը, որի համաձայն ներկայացվել են ծառայությունների մատուցման միավոր գները:

Գնացուցակի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ Արթուր Օհանյան Մասյիսի Ա/Ձ-ն թիվ 4 հավելվածով՝ գնային առաջարկով, 13-րդ չափաբաժնի համար ներկայացրել է ոչ թե ծառայության մատուցման ընդհանուր գինը, այլ միավորի գինը:

Բողոքի իրավական հիմքերը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների բողոքարկման խորհրդին:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ խորհուրդը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման,

գ. փոփոխելու ընդունված որոշումները.

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը ներկայացվում է նույն օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում:

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ բողոքի քննությունը բաց է հանրության համար, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների: Բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին խորհուրդը հայտարարություն է հրապարակում տեղեկագրում:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Այսպիսով, գտնում ենք, որ ՀՀ դատական դեպարտամենտ ՊԿՀ-ի ԴԴ-ԳՀԾՁԲ-18/01 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել են Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով և 41-րդ կետով սահմանված պահանջները, քանի որ Արթուր Օհանյան Մասյիսի Ա/Ձ-ի կողմից ներկայացված թիվ 4 հավելվածը՝ գնային առաջարկը, ներկայացվել է միավորի գնով, իսկ Ընթացակարգի հրավերով հստակ սահմանվել է, որ գնային առաջարկները պետք է ներկայացվեն պայմանագրի կատարման համար նախատեսված ընդհանուր գումարով»:

Գրիգոր Այվազյան Ա/Ձ-ն Խորհրդին ներկայացված բողոքով խնդրել է.

1.Պարտավորեցնել ՀՀ դատական դեպարտամենտ ՊԿՀ-ի ԴԴ-ԳՀԾՁԲ-18/01 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել հանձնաժողովի 16.02.2018թ. նիստի թիվ 2, 19.02.2018թ. նիստի թիվ 3, 22.02.2018թ. նիստի թիվ 4, 27.02.2018թ. նիստի թիվ 5, 07.03.2018թ. նիստի թիվ 6 արձանագրություններով կայացված որոշումները, այդ թվում www.gnumner.am կայքում հրապարակված պայմանագիր կնքելու մասին որոշումը՝ 13-րդ չափաբաժնի մասով:

2.Պարտավորոցնել ՀՀ դատական դեպարտամենտ ՊԿՀ-ի ԴԴ-ԳՀԾՁԲ-18/01 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին մերժել Արթուր Օհանյան Մասյիսի Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտը:

Խորհրդի նիստերին մասնակցում էր Գրիգոր Այվազյան Ա/Ձ-ի լիազորված ներկայացուցիչ Ռաֆայել Մկրտչյանը:

2. <u>ՀՀ դատական դեպարտամենտ ՊԿՀ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

ՀՀ դատական դեպարտամենտ ՊԿՀ-ն 15.03.2018թ. թիվ ԴԴ-3-Ե-1655 գրությամբ Խորհրդին ներկայացրած դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 14.03.2018թ. գրության հայտնում ենք, որ 2018թ. փետրվարի 9-ին «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար գրասենյակային հաշվողական

սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի (այսուհետև՝ Համակարգ) միջոցով կազմակերպվել է ԴԴ-ԳՀԾՁԲ-18/01 ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերի թիվ 5 հավելվածի՝ պայմանագրի նախագծի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանվել են ծառայության մատուցման առավելագույն քանակները:

Ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ եթե կնքվելիք պայմանագրի գինը կայուն է, ապա գնային առաջարկը ներկայացվում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով (ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 8-րդ ենթակետ):

Ընթացակարգի հրավերի թիվ 4 հավելվածով՝ գնային առաջարկով, սահմանվել է, որ 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ չափաբաժինները ներկայացված են մի քանի ծառայությունների համախմբով, ինչն էլ ենթադրում է, որ մասնակցի կողմից ներկայացվող յուրաքանչյուր չափաբաժնի գնային առաջարկը պետք է ներառի տվյալ չափաբաժնով ներկայացված ծառայությունների համար առաջարկվող մատուցման ընդհանուր գների հանրագումարը:

Նշված հավելվածին կցված աղյուսակով, որը սահմանվել է որպես օրինակելի ձև, մասնակիցը պետք է ներկայացներ մատուցվող ծառայության առանձին տեսակների մատուցման միավորի գները (ՀՀ դրամ):

Ընթացակարգի՝ բողոքի առարկա հանդիսացող 13-րդ չափաբաժնի (Օդորակիչների վերանորոգում) մասով հայտեր են ներկայացրել Արթուր Օհանյան Մայիսի Ա/Ձ-ն և Գրիգոր Այվազյան Ա/Ձ-ն:

Գնահատող հանձնաժողովի 2018թ. փետրվարի 22-ի թիվ 4 որոշմամբ Արթուր Օհանյան Մայիսի Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտը գնահատվել է բավարար և 2018թ. փետրվարի 27-ի թիվ 5 որոշմամբ 13-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչվել Արթուր Օհանյան Մայիսի Ա/Ձ-ն (ներկայացված գնային առաջարկը՝ 144,000 ՀՀ դրամ), իսկ նույն չափաբաժնի մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչվել Գրիգոր Այվազյան ԱՁ-ն (ներկայացված գնային առաջարկը՝ 905,000 ՀՀ դրամ): 2018թ. մարտի 7-ի թիվ 6 որոշմամբ 13-րդ չափաբաժնի մասով Արթուր Օհանյան Մայիսի Ա/Ձ-ի մասնակցության իրավունքը գնահատվել է բավարար, հաստատվել են հայտերի

գնահատման արդյունքները և ընտրված մասնակից է հայտարարվել Արթուր Օհանյան Մայիսի Ա/Ձ-ն: 2018թ. մարտի 7-ին հրապարակվել է պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարություն՝ անգործության ժամկետ սահմանելով մինչև 2018թ. մարտի 12-ը ներառյալ:

Արթուր Օհանյան Մայիսի Ա/Ձ-ի կողմից ներկայացված գնային առաջարկում (Հավելված 4) նշված է, որ, ուսումնասիրելով ԴԴ-ԳՀԾՁԲ-18/01 ծածկագրով գնանշման հարցման հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, Արթուր Օհանյան Մայիսի Ա/Ձ-ն առաջարկում է պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով՝ աղյուսակի Ընդհանուր գինը (տառերով և թվերով) սյունակում նշելով՝ 144,000 (Հարյուր քառասունչորս հազար ՀՀ դրամ): Նշված գնային առաջարկին կցված փաստաթղթում Արթուր Օհանյան Մայիսի Ա/Ձ-ն ներկայացրել է համապատասխան չափաբաժնի մասով մատուցվող ծառայության առանձին տեսակների գները:

Հարկ ենք համարում տեղեկացնել, որ Գրիգոր Այվազյան Ա/Ձ-ի (այսուհետև՝ Բողոքաբեր) կողմից ներկայացված բողոքում նշվել է, որ Արթուր Օհանյան Մայիսի Ա/Ձ-ն ներկայացրել է ծառայությունների մատուցման միավորի գները, մինչդեռ Արթուր Օհանյան Մայիսի Ա/Ձ-ի կողմից ներկայացված փաստաթղթում որևէ կերպ նշված չէ, որ դրանք ծառայության մատուցման միավորի գներն են, ավելին, փաստաթղթով ներկայացված աղյուսակի վերջում հաշվարկվել և ներկայացվել է ծառայությունների մատուցման ընդամենը գինը, այն է՝ «ընդամենը 144,000 ՀՀ դրամ», որը համապատասխանում է գնային առաջարկում (Հավելված 4) նշված՝ պայմանագրի կատարաման համար առաջարկվող ընդհանուր գնին, ինչպես նաև Համակարգում լրացված գնին (Արթուր Օհանյան Մայիսի Ա/Ձ-ն չի հանդիսանում ԱԱՀ վճարող):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն

էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոգրյալով պայմանավորված՝ հայտնում ենք, որ ԴԴ-ԳՀԾՁԲ-18/01 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Արթուր Օհանյան Մայիսի Ա/Ձ-ի հայտը գնահատել է բավարար, առաջնորդվելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներով՝ չունենալով մասնակցի գնային առաջարկը հրավերի պահանջներին անհամապատասխան գնահատելու և հայտը մերժելու հիմքեր, քանի որ Ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ կցված գնացուցակը օրինակելի ձև է, և նույն հրավերի ՄԱՍ II-ի 1-ին բաժնի 1.3 կետով սահմանված է, որ նպատակահարմարության դեպքում մասնակիցը պահանջվող տեղեկությունները կարող է ներկայացնել առաջարկվող ձևերից տարբերվող այլ ձևերով՝ պահպանելով պահանջվող վավերապայմանները:»:

Խորհրդի նիստերին մասնակցում էր ՀՀ դատական դեպարտամենտ ՊԿՀ-ի լիազորված ներկայացուցիչ Զառա Աբգարյանը:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2018/38 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է Գրիգոր Այվազյան Ա/Ձ-ի կողմից 12.03.2018թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ԴԴ-ԳՀԾՁԲ-18/01 ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ԴԴ-ԳՀԾՁԲ-18/01 ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 22.02.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 4, 27.02.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 5 և 07.03.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 6 արձանագրությունները, Արթուր Օհանյան Մայիսի

Ա/Ձ-ի կողմից Ընթացակարգին ներկայացված հայտի պատճենը, Պատվիրատուի 15.03.2018թ. թիվ ԴԴ-3-Ե-1655 գրությամբ հայտնած դիրքորոշումը.

ՀՀ դատական դեպարտամենտ ՊԿՀ-Ի կարիքների համար գրասենյակային հաշվողական սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ԴԴ-ԳՀԾՁԲ-18/01 ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ՝ նաև Ընթացակարգ), որին մասնակցության հայտ են ներկայացրել Արթուր Օհանյան Մայիսի Ա/Ձ-ն և Գրիգոր Այվազյան Ա/Ձ-ն:

Գնահատող հանձնաժողովը 22.02.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության 2-րդ կետով որոշել է Արթուր Օհանյան Մայիսի Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար:

Հանձնաժողովը՝ ղեկավարվելով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով, 07.03.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 6 արձանագրության 1-ին կետով որոշել է Ընթացակարգի 13-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել Արթուր Օհանյան Մայիսի Ա/Ձ-ին:

Գրիգոր Այվազյան Ա/Ձ-ն Խորհրդին ներկայացված բողոքով հայտնել է, որ Արթուր Օհանյան Մայիսի Ա/Ձ-ն հայտի թիվ 4 հավելվածով՝ գնային առաջարկով, ներկայացրել է ոչ թե ծառայության ամբողջ ծավալի մատուցման համար առաջարկվող ընդհանուր գինը, այլ միավորի գինը, մինչդեռ Ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ գնային առաջարկները պետք է ներկայացվեն պայմանագրի կատարման համար նախատեսված ընդհանուր գումարով:

Բողոքի քննության նպատակով 16.03.2018թ. տեղի ունեցած նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց, որ Արթուր Օհանյան Մայիսի Ա/Ձ-ի կողմից ներկայացված գնային առաջարկին կից փաստաթղթում որևէ կերպ նշված չէ, որ նշված գինը ծառայության մատուցման համար հաշվարկված միավորի գինն է, հետևաբար, այն Հանձնաժողովի կողմից իրավացիորեն դիտարկվել է որպես ծառայությունների մատուցման ընդհանուր գին, որը համապատասխանել է նաև գնային առաջարկում (Հավելված 4) նշված՝ պայմանագրի կատարաման համար առաջարկվող ընդհանուր գնին:

Խորհրդում տեղի ունեցած նիստի ժամանակ, որպես երրորդ կողմ ներգրավված Արթուր Օհանյան Մայիսի Ա/Ձ-ն ընդունեց, որ իր կողմից ներկայացված գնային առաջարկում ներկայացվել է ծառայության մատուցման միավորի գինը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 34-րդ հոդվածի՝

• 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

• 32-րդ կետի 1-ին մասի «գ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է գնային առաջարկ.

• 32-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ եթե պայմանագրի գինը կայուն է, ապա մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով.

• 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

«ԴԴ-ԳՀԾՁԲ-18/01» ծածկագրով Ընթացակարգի հրավերի՝

• 5.3 կետի համաձայն՝ եթե կնքվելիք պայմանագրի գինը կայուն է, ապա գնային առաջարկը ներկայացվում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով և համակարգում պարտադիր լրացվում է առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման:

• 8.2 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում նույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և/կամ հայտի ապահովումը կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

• 8.4 կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով: Ընդ որում, հանձնաժողովի կողմից առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելիս գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց նույն հրավերի 1-ին մասի 5.2-րդ կետում նշված հարկի գումարի հաշվարկման, իսկ հայտերը գնահատելիս հիմք է ընդունում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ Արթուր Օհանյան Մայիսի Ա/Ձ-ի կողմից ծառայության մատուցման համար ներկայացված գնային առաջարկը կազմել է 144,000 ՀՀ դրամ, ընդ որում, ներկայացված գնային առաջարկում, ինչպես նաև դրան կից փաստաթղթում չի եղել որևէ նշում այն մասին, որ ներկայացված գինը ծառայության մատուցման համար հաշվարկված միավորի գինն է:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ Արթուր Օհանյան Մասյիսի Ա/Ձ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը եղել է Ընթացակարգի 13-րդ չափաբաժնի մասով ներկայացված գնային առաջարկներից նվազագույնը:

Վերը նշվածով պայմանավորված՝ Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովը՝ բավարար գնահատվելով Արթուր Օհանյան Մայիսի Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտը և վերջինիս 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելով՝ գործել է իրավաչափ:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Ա/Ձ Գրիգոր Այվազյանի կողմից 12.03.2018թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ